«Հաստատում եմ»

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

---------- Դ. Ռ. Գալոյան

«16» հունիսի 2020թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Վանո Լևոնի Ղազազյանի՝ «Ներդրումների արդյունավետության գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Մասնակցում էին՝ ՀՊՏՀ «Մակրոէկոնոմիկայի» ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կ.Հ. Գրիգորյանը, տնտեսագիտության թեկնածու, դոցենտներ Ս.Վ. Խաչիկյանը, Ծ.Ջ. Կարապետյանը, Ա.Հ. Մուրադյանը, Ռ.Ս. Ղանթարչյանը, Ք.Ջ. Վարդանյանը, Գ.Ա. Ավագյանը, տնտեսագիտության թեկնածու, ասիստենտներ Ա.Ս. Ջանջոյանը, Վ.Ի. Տիգրանյանը, դասախոս Մ.Ա. Ղարագյոզյանը, լաբորանտ Մ.Ա. Արղությանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Համաշխարհային տնտեսության գլոբալացումը հանգեցրել է առանձին երկրների տնտեսություններում վերափոխումների անհրաժեշտության: Դրանց շարժընթացը պայմանավորված է տնտեսական աճի տեմպով, որոնք երկրի տնտեսությունում կարող են ապահովված լինել ներդրումների ակտիվ հոսքի պայմաններում: Ցանկացած տնտեսական համակարգում տնտեսական աճի նյութական հիմքը կապիտալ ներդրումներն են:

Ներդրումային գործընթացների հետազոտումը թույլ է տալիս բացահայտել ոչ միայն լրացուցիչ կապիտալ ռեսուրսների ներգրավման աղբյուրներն ու հնարավորությունները, այլև դրանց առավել արդյունավետ օգտագործման եղանակները: Ներդրումների և դրանց խթանման հիմնախնդիրները տարբեր մեկնություններ է ստացել տնտեսագիտության մտքի ուղղություններում, որով և իր զարգացումն է ապրել արդյունավետության չափման և վերլուծության գիտագործնական մեթոդաբանությունը:

Ներկայիս ժամանակաշրջանում ներդրումների իրականացման արդյունավետությունը չի դիտարկվում ներդրողի զուտ տնտեսական տեսանկյունից, այլ գնահատվում է տնտեսական անվտանգության ապահովման, կապիտալի միգրացիոն տեղաշարժերի, սոցիալական գործարարության ձևավորման, տարածքային համաչափ զարգացումների առումով:

Արդի պայմաններում ներդրումների արդյունավետության գնահատումը բուռն քննարկումների առիթ է տալիս նաև հանրային ոլորտում, երբ մակրոտնտեսական հարցադրումներ են կատարվում ներդրումային ծրագրերին առնչվող հարկային արդյունավետ քաղաքականության վարման, բնակչության եկամուտների ավելացման, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման, կուտակված մարդկային կապիտալի նպատակային օգտագործման և որակական կազմի բարելավման առումներով:

Ներդրումների և դրա արդյունավետության գնահատման հիմնախնդիրների քննարկումները և լուծման ուղիների առաջադրումները տեղ են գտել բազմաթիվ տնտեսագետների աշխատություններում, սակայն, առանձին հիմնախնդիրներ դեռևս իրենց խորքային լուծումները չեն ստացել, որով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու այժմեականությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտն է ՀՀ կազմակերպություններում իրականացվող ներդրումային գործընթացը՝ իրեն հատուկ գործառույթների ոլորտով: Հետազոտության առարկան ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային շրջանակն է:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Հետազոտության նպատակն է ՀՀ տնտեսությունում իրականացվող ներդրումների արդյունավետության գնահատման բարելավման ուղիների ներկայացումը, որոնք կնպաստեն ներդրումային ծրագրերի հատույցի չափման, տնտեսավարման տարբեր մակարդակներում համախմբման և վերլուծության գործառույթների բարելավմանը և ներդրումների գծով հիմնավոր կառավարչական որոշումների կայացմանը:

Ելնելով հետազոտության նպատակից, ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները,

- բացահայտել ՀՀ տնտեսական համակարգում ներդրումների ակտիվությանը խոչընդոտող պատճառահետևանքային կապերը և ներկայացնել առաջարկություններ՝ ներդրումային ծրագրերի իրագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ,
- մշակել ներդրումների արդյունավետության գնահատման ինտեգրալային ցուցանիշ, հիմնվելով ներդրումային ծրագրերին առնչվող շահառուների պահանջմունքների բավարարման փաստացի աստիճանի վրա, և դրանով իսկ հնարավորություն ստեղծել ներդրումների հատույցի վրա ազդող բազմաբնույթ գործոնային վերլուծության համար,
- մշակել ներդրումների ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման արդյունավետության գնահատման ցուցանիշ, հաշվի առնելով ներդրումային ծրագրերի իրագործման ռեսուրսների բազմազանությունը, և իրականացնել ներդրումների ֆինանսավորման արդյունավետության փոփոխման գործոնային

վերլուծություն՝ բացահայտելով յուրաքանչյուր ռեսուրսային աղբյուրի ազդեցությունը ֆինանսավորման արժեքի փոփոխման վրա:

- մշակել ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային դրույթներ, հնարավորություն ընձեռելով համալիր մոտեցմամբ արժևորելու ներդրումային ծրագրերի արդյունքները միկրո և մակրոտնտեսական մակարդակներում, դրանով նպաստելով շահառուների պահանջմունքներին ուղղված կառավարչական որոշումների կայացմանը:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը:

Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել ներդրումային քաղաքականության վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հետազոտողների աշխատությունները, գիտական հրատարակումները, աշխատանքային փաստաթղթերը, մակրոտնտեսական վերլուծությունները:

Ատենախոսությունում օգտագործվել են ներդրումային գործընթացի զարգացմանը վերաբերող հաշվետվական տվյալներ, ՀՀ վիճակագրական և ուսումնասիրման բնագավառին առնչվող այլ նյութեր:

Հետազոտության մեջ կիրառվել են գիտական աբստրակցիայի, ֆինանսատնտեսական, գործոնային և փորձագիտական վերլուծության մեթոդներ, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրագործման գծով փորձագիտական ուսումնասիրությունների եղանակներ:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

Հեղինակի կողմից ներկայացված գիտական նորույթներն են՝

1. Հայաստանի Հանրապետությունում առկա ներդրումային գրավչության աստիճանի գնահատումների հիման վրա բացահայտվել են ներդրումների ակտիվությանը խոչընդոտող պատճառահետևանքային կապերը և դրանց հիման վրա կատարվել են առաջարկություններ՝ ներդրումային ծրագրերի իրագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ,

2. մշակվել է ներդրումների արդյունավետության գնահատման ինտեգրալային ցուցանիշ, հիմք ընդունելով ինչպես ներդրումային ծրագրերին առնչվող շահառուների պահանջմունքների բավարարման փաստացի աստիճանը, այնպես էլ ներդրումների հատույցի վրա բազմաբնույթ գործոնների ազդեցությունը,
3. մշակվել է ներդրումների ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման արդյունավետության գնահատման ցուցանիշ, որով թիրախավորվում են ներդրումային ծրագրերի իրագործման ռեսուրսները և իրականացվում է ներդրումների ֆինանսավորման արդյունավետության փոփոխման գործոնային վերլուծություն՝ բացահայտելով յուրաքանչյուր ռեսուրսային աղբյուրի ազդեցությունը ֆինանսավորման արժեքի փոփոխման վրա:
4. մշակվել են ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային դրույթներ, որոնք հնարավորություն են ընձեռում համալիր մոտեցմամբ արժևորելու ներդրումային ծրագրերի արդյունքները միկրո և մակրոտնտեսական մակարդակներում՝ նպաստելով շահառուների պահանջմունքներին ուղղված կառավարչական որոշումների կայացմանը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, ներկայացվել է գիտական նորույթը, ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, տեսական և տեղեկատվական հիմքերը, փորձարկումներն ու հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Ներդրումային գործընթացի ակտիվությունը ՀՀ տնտեսական համակարգում» գլխում, ներկայացված են ՀՀ տնտեսությունում ներդրումային գործառույթները, բացահայտված են Հայաստանի Հանրապետությունում ներդրումային գրավչության ապահովման և ներդրումների օրենսդրական խթանման հիմնախնդիրները:

Ատենախոսության երկրորդ՝ «Ներդրումների արդյունավետության դրսևորման առանձնահատկությունները տնտեսավարման արդի պայմաններում» գլխում,

ներկայացված են ներդրումների դասակարգման մոտեցումները տնտեսավարման համատեքստում և ներդրումային ակտիվության դրսևորումները կապիտալի միգրացիայի համատեքստում, պարզաբանված են ներդրումների ֆինանսավորման աղբյուրների արդյունավետ համակցման հիմնախնդիրները:

Ատենախոսության երրորդ՝ «Ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային հիմնախնդիրները» գլխում, ներկայացված են ներդրումների արդյունավետության գնահատման մեթոդաբանական մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում, տրված են ներդրումների արդյունավետության չափման և արժևորման բարելավման ուղիները, ինչպես նաև ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային շրջանակի բարելավման ուղիները:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ատենախոսը ներկայացրել է հետազոտությունից բխող առաջարկությունները:

Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ:

Ստորև ներկայացվում են ատենախոսության վերաբերյալ դիտողությունները՝

1. Ձևակերպված առաջին գիտական նորույթը հիմնավորման և նաև խմբագրման կարիք ունի, քանի որ հեղինակն աշխատանքում չի հստակեցրել Հայաստանի Հանրապետությունում ներդրումների ակտիվությանը խոչընդոտող պատճառահետևանքային կապերը և չի նշել առաջարկություններ անհրաժեշտ գործիքակազմը կիրառելու համար:
2. Հետազոտության շարադրանքում հեղինակը հաճախ է առաջնորդվել հայտնի, երբեմն դասագրքային մեկնաբանություններով և դիտարկումներով: Այսպես. օրինակ՝ 3.1. պարագրաֆում ներդրումների արդյունավետության գնահատումը ներկայացվել է դասագրքային հայտնի բանաձևերով: էջ 72-ում հեղինակն օգտվել է մի բանաձևից, որի վերաբերյալ չկա դիտարկում, թե ով է բանաձևի հեղինակը և ինչու է այդ բանաձևը կիրառվում, որն է դրա առավելությունը կամ թերությունն այլ եղանակներով իրականացվող հաշվարկների համեմատ:
3. Ատենախոսությունում միայն հպանցիկ անդրադարձ է կատարվել ներդրումների արդյունավետության գնահատման միջազգային փորձի մեթոդաբանական մեկնաբանումներին: Անհրաժեշտ էր ներկայացնել առավել խորքային

վերլուծություններ միջազգային առաջավոր փորձի առումով, և գնահատել դրա ներդրման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում:

4. Ատենախոսության երկրորդ գլխում փորձ է արվել փոխկապակցել կապիտալի միգրացիան ներդրումային արդյունավետության հետ, սակայն, աշխատանքում չի ներկայացվել կապիտալի միգրացիայի ՀՀ վիճակագրական վերլուծություն, որով համոզիչ չեն դառնում հեղինակի տեսական դատողությունները ներդրումների արդյունավետության և կապիտալի միգրացիայի փոխառնչության վերաբերյալ:
5. Գծապատկեր 1.1.1-ը, որը վերաբերում է տնտեսությունում ներդրումների առանցքային գործառույթներին, լրացուցիչ մեկնաբանությունների կարիք ունի, քանի որ գործառույթները սոսկ թվարկված են, սակայն դրանց գործունեության արդյունքային հետագիծը չի ներկայացված:
6. Ատենախոսությունում տեղ են գտել մի շարք տեխնիկական, շարահյուսական վրիպակներ և խմբագրական բնույթի բացթողումներ (օրինակ էջ 33, 37 և այլն):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, վերոնշյալ դիտողություններով հանդերձ, Վանո Լևոնի Ղազազյանի «Ներդրումների արդյունավետության գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ինքնուրույն կատարված աշխատանք է:

Ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջների, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 -«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Սեղմագիրն իր բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը: